ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 փետրվարի 2019 թվականի N 8-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով, համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի պահանջների և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 11-ի N 14-Ն որոշումը՝ ***որոշում եմ.***

1. 2019 թվականի փետրվարի 18-ին Գետամեջի համայնքապետարանի շենքում կազմակերպել հանրային քննարկում՝ համայնք Գետամեջ 1-ին փողոց 6-րդ փակուղի 6-րդ հողամաս հասցեում պահեստային մասի կառուցման շինարարական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ (2-րդ փուլ):
2. Հաստատել համայնք Գետամեջ 1-ին փողոց 6-րդ փակուղի 6-րդ հողամաս հասցեում պահեստային մասի կառուցման շինարարական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ (2-րդ փուլ) կազմակերպվող հանրային քննարկման հրավերը՝ համաձայն հավելվածի:
3. Գետամեջի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Կարեն Անդրանիկի Սարգսյանին՝
1) Տալ հայտարարություն «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթում և համայնքապետարանի պաշտոնական կայքում տեղադրել համայնք Գետամեջ 1-ին փողոց 6-րդ փակուղի 6-րդ հողամաս հասցեում պահեստային մասի կառուցման շինարարական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ (2-րդ փուլ) հանրային քննարկման հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2019 թվականի փետրվարի 1
գ.Գետամեջ

Հավելված

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Գետամեջ համայնքի ղեկավարի 2019 թվականի

փետրվարի 1-ի N 8-Ա որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՀՐԱՎԵՐ

Համաձայն Գետամեջ համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 11-ի «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը հաստատելու մասին» N 14-Ն որոշմամբ հաստատված հավելվածի, 2019 թվականի փետրվարի 18-ին ժամը՝ 12:00-ին Գետամեջի համայնքապետարանի շենքում կկայանա հանրային բաց լսումներ՝ համայնք Գետամեջ 1-ին փողոց 6-րդ փակուղի 6-րդ հողամաս հասցեում պահեստային մասի կառուցման շինարարական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ (2-րդ փուլ):

Հանրային լսումներին կարող են մասնակցել բոլոր շահագրգիռ ֆիզիկական և իրավաբանական անձինք:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 փետրվարի 2019 թվականի N 9-Ա

ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 53-րդ կետի բ) ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Գ. Գետամեջ 5-րդ տեղամաս 16 այգետնակի և այգեհողամասի հասցեում գտնվող Ալբերտ Լևոնի Մարտիրոսյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի կառուցապատման հողամասը և շինությունը /անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական N 2349592, կադաստրային ծածկագիր՝ 07-025-0234-0001-ից/ վերահասցեավորել և տրամադրել հետևյալ հասցեն՝ համայնք Գետամեջ 8-րդ փողոց 3-րդ փակուղի N 2 այգետնակ:
2. Դիմել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի մարզերի միավորված ստորաբաժանում՝ հասցեի պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2019 թվականի փետրվարի 5
գ.Գետամեջ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Գետամեջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Գետամեջ, getamej.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 փետրվարի 2019 թվականի N 10-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 17-ի N 470-Ն որոշման և 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման կարգի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ կետերով, 13-րդ կետի «ա)» ենթակետով, 18-րդ կետի «դ)» ենթակետով, հիմք ընդունելով անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը, տրված՝ 2019 թվականի հունվարի 25-ին՝ ***որոշում եմ.***

1. Օրինականացնել Շանթ Մարգարոսյանին պատկանող Կոտայքի մարզի Գետամեջ համայնքի 16-րդ փողոցի 9-րդ հասցեի բնակելի կառուցապատման (այգեգործական) հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 07-025-0232-0013) 2010 թվականին ինքնակամ կառուցած բաց պատշգամբը՝ 11,2 քառակուսի մետր, 1-ին հարկում կցակառույցը՝ 5,2 քառակուսի մետր, բաց պատշգամբը՝ 11 քառակուսի մետր, ճեղնահարկում բաց պատշգամբը՝ 16,2 քառակուսի մետր արտաքին մակերեսով և 1-ին հարկում ինքնակամ բացված 2 պատուհանը, կիսանկուղում փակված 2 պատուհանը, ճեղնահարկում փակված 1 պատուհանը և 1 պատուհան փոխված դռան:
2. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Ինքնակամ շինությունների օրինականացման վճարները սահմանված են հետևյալ հաշվարկով.
1) այգետնակի յուրաքանչյուր մեկ քառակուսի մետրի համար՝ 1 300 (մեկ հազար երեք հարյուր) դրամ.
3) ինքնակամ բացված (փակված) յուրաքանչյուր բացվածքի համար՝ 1 300 (մեկ հազար երեք հարյուր) դրամ:

4. Հաշվի առնելով, որ սույն որոշման 1-ին կետում նշված՝ ինքնակամ բացվածքները (փակվածքները) և 43,6 քառակուսի մետր ընդհանուր արտաքին մակերեսներով ինքնակամ շինությունները կառուցվել են 2001 թվականի մայիսի 15-ից հետո, օրինականացման համար Գետամեջի համայնքապետարանի 900115000094 հաշվեհամարին վճարել 64 480 (վաթսունչորս հազար չորս հարյուր ութսուն) դրամ:
5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

2019 թվականի հեկտեմբերի 6
գ.Գետամեջ